ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔՈՒՄ ԱՐՏԱԳՐՈՒԱԾ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ

Կարէն Յովհաննիսեան, Հայկ Յակոբեան

Ներածութիւն

ՀՀ-ի տարբեր գիւղերում են գտնւում «Տան Սուրբ ձեռագրեր»[1]: Այդ ձեռագրերը մի վայրում չեն գտնւում, այլ տարբեր մասնաւոր հաւաքածուներում՝ Հայաստանի հան-բապետութեան մի շարք գիւղերում եւ քաղաքներում: «Տան Սուրբ ձեռագիր» երեւոյթը յիշատակւում է դեռեւս ԺԹ. դարից, եւ իրենից ներկայացնում է, ըստ էութեան, տուեալ ձեռագրի սրբազնացում, սրբացում, հետեւաբար՝ պաշտամունք[2]:

«Տան Սուրբ ձեռագիր» երեւոյթի առաջացման պատճառը, հիմնականում, պատմական Հայաստանի տարածքը պատուհասած տարատեսակ պատերազմներ էին, մասնաւորապէս 1828-1829 թթ. եւ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմները եւ Հայոց մեծ Եղեռնը (1914-1923 թթ.) ու այդ պատերազմներին յաջորդած գաղթի ժամանակ ձեռագրերի ու հնատիպ գրքերի տեղափոխումն Արեւելեան Հայաստան: Փրկուած այդ ձեռագրերի մասին հաւաքուած որոշ պատմութիւններն ունեն ցեղասպանագիտական, ազգագրական, բանագիտական, տեղագրական մեծ արժէք:

Մեր կողմից ուսումնասիրուած ձեռագրերի զգալի մասը կամ արտագրուել է Վասպուրականում կամ պահուել է 1915 թ.-ի դրութեամբ այնտեղ, որոնց փրկութիւնը զուգորդուել է Վասպուրականի հայութեան մեծ մասի փրկութեամբ:

Յօդուածում կը ներկայացուի «Տան Սուրբ» ձեռագրերից մեկը՝ պաշտամունքի, սրբավայրի եւ ձեռագրագիտական ուսումնասիրութեան համալիր մօտեցմամբ:

Սրբավայրը

Գրեթէ բոլոր «Տան Սուրբ» ձեռագրերը կամ առհասարակ սուրբ գրքերն ունեն սրբավայր: Մեր կողմից քննուող ձեռագրի սրբավայրը տնակ է, որը հասարակ ուղղանկիւնաձեւ շինութիւն է, ծածկուած հարթ տանիքով եւ ժողովուրդն այն անուանում է մատուռ: Դռան ձախ կողմում կանգնեցուած է մեկ մեծ նոր խաչքար՝ խաչելութեան տեսարանով եւ երկու փոքր խաչքարեր: Մատուռի ներսում կան բազմաթիւ շուշպաներ, սրբապատկերների կրկնօրինակներ, խաչեր, այլ իրեր, որոնք նուիրաբերուել են Աւետարանին: Մատուռի պատուհանի դիմաց դրուած է մեծ մոմակալը՝ մոմավառութեան համար:

---

1 Հայաստանում կատարւում են «Սուրբ գրքերի» պաշտամունքին վերաբերող հետազօտական աշխատանքներ, որը իրականացնում է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատանքային խումբը ի դէմս պ.գ.թ. Լ. Սիմոնեանի (ղեկավար), պ.գ.թ. Հ. Յակոբեանի, պ.գ.թ. Կ. Յովհաննիսեանի եւ Գ. Ղազարեանի եւ հովանաւորւում է «Calouste Gulbenkian Foundation» հիմնադրամի կողմից: Համաձայն «Calouste Gulbenkian Foundation» հիմնադրամի հետ կնքուած պայմանագրի՝ հետազօտող խումբն իրաւունք չունի նշել մասնաւոր հաւաքածուներում գտնուող սուրբ գրքերի գտնուելու վայրերը՝ ելնելով անվտանգութեան նկատառումներից: Ուստի Աւետարանի տեղորոշումը յօդուածում մատնանշուած չէ: Յօդուածում օգտագործուած ամբողջ դաշտային եւ ձեռագրագիտական նիւթը գրանցուել է Կ. Յովհաննիսեանի եւ Հ. Յակոբեանի կողմից, իսկ հեղինակային իրաւունքը պատկանում է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտին:

2 Առաւել մանրամասն տե՛ս **Ց. Մարութեան,** *«Տան սուրբ» երեւոյթը. ակունքների հարցը եւ մերօրեայ դրսեւորումները*, Հայոց սրբերը եւ սրբավայրերը, Երեւան, 2001, էջ 337-346:

Ըստ Աւետարանի տէրերի՝ գիրքը բերուել է Վանից դէպի Մուշ ընկած տարածքի որեւէ բնակավայրից. աւելի ստոյգ՝ չէին յիշում: Ցեղասպանութեան ժամանակ տէրերի՝ Լեոնիկ եւ Անուշաւան եղբայրների մեծ պապու հայրը՝ Խաչոն, իր եղբայրների եւ ընտանիքների հետ անցել է Արաքսը եւ հանգրուանել այս բնակավայրում: Գետն անցնելուց Աւետարանն ընկել է գետը եւ միառժամանակ մնացել այնտեղ, յետոյ այն գտել են թուրք զինուորները: Տէրերի տատու կեսուրը՝ Եղսանը, թուրքերից յետ է գնել Աւետարանը՝ փոխարէնը տալով տոհմական ոսկիներն ու իր վրայի ոսկէ քամարը: Հետաքրքիր պատմութիւն են պատմում ներկայիս տէրերն Աւետարանի դեգերումների մասին՝ արդէն տեղի ունեցած խորհրդային շրջանում: Խօսում են երազների, տեսիլքների, հրաշքով բուժումների մասին:

Ներկայումս Աւետարանը միշտ պահւում է տանը, իսկ մատուռում կատարւում են հիմնական ծիսական արարողութիւնները: Գիրքը տանից դուրս է բերւում տարին մեկ անգամ, միայն իր ուխտի օրը՝ Զատկի Կարմիր կիրակին[3]: Շատ ուխտաւորներ են գալիս ՀՀ տարբեր բնակավայրերից՝ Երեւան, Թալին եւ այլն: Առաջ մատաղներ անում էին, հիմա չեն անում: Սրբավայրը կոնկրետ գործառոյթներ չունի, ըստ տէրերի՝ կարեւորը հաւատով գան եւ Աւետարանն անպայման կ'օգնի:

Աւետարանի արուեստագիտական ու ձեռագրագիտական համատեքստը

Աւետարանը հարուստ է մանրանկարներով եւ լուսանցազարդերով: Աւետարանի յիշատակարանից եւ նկարչական ոճից պարզ է, որ Աւետարանի ծաղկողն է յայտնի նկարիչ, գրիչ եւ կազմող Զաքարիա Աւանցին կամ Վանեցին[4]:

Զաքարիա Աւանցու ձեռագրական ժառանգութիւնից մեր օրեր են հասել 18 Աւետարան, 2 Մաշտոց, 1 Աղօթամատոյց եւ 2 հատակտոր, ընդամենը՝ 23 միաւոր[5]: Փաստօրէն, մեր կողմից յայտնաբերուած Աւետարանը Զաքարիա Աւանցու յայտնի ձեռագրերի թիւն աւելացնում է եւս մեկով, այն հասցնելով 24 միաւորի:

Զաքարիա Աւանցին ինքնատիպ մանրանկարիչ է, սակայն իր պատկերազարդումներում յաճախ կրկնում է ոչ միայն թեմաներն ու մոտիվները, այլեւ մանրամասներն ու խորհրդաբանութիւնը՝ կրկնօրինակելով իր իսկ պատկերազարդումները: Բացառութիւն չէ եւ այս նորայայտ Աւետարանը, որտեղ օգտագործուած են նոյն թեմաներն ու մանրամասները, ինչպէս իր կողմից պատկերզարդուած այլ Աւետարաններում:

Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանի կարծիքով՝ Զաքարիան օգտուել է աւելի հին, պատրաստի Աւետարանի նկարներից[6]: Ըստ Մեսրոպ եպիսկոպոսի՝ Զաքարիա

3 Աւետարանի տէրերն այսպէս բացատրեցին ուխտի օրուայ հաշուարկը՝ Զատկից յետոյ առաջին՝ Կանաչ կիրակին Ս. Դաւթի ուխտն է, միւսը՝ Կարմիր կիրակին՝ Կարմիր Աւետարանի:

4 Զաքարիա Աւանցին կամ Վանեցին իր աշակերտներով գործել է Աւանց գիւղում, որը մտնում էր Վարագայ վանքի թեմի մէջ: Նա ծնուել է ԺԶ. դ. երկրորդ կէսին, քահանայի ընտանիքում: Մանուկ հասակից կորցրել է մօրը եւ մեծացել է հօր խնամքով: Զաքարիայի կողմից 1595 թ. պատկերազարդած ձեռագրերից մեկի յիշատակարանում գրուած է, որ նա եղել է «Տէր Յակոբ Զուղեցու», այսինքն՝ նշանաւոր մանրանկարիչ Յակոբ Զուղայեցու աշակերտը: 1604 թ. Շահ Աբասի կազմակերպած սարսափելի բռնագաղթի զոհերից մեկն է դառնում Զաքարիան, նա եւս տարագրւում է Սպահան, որտեղ շարունակում է իր գործը: Զաքարիա Աւանցին վախճանուել է 1617 թ.: Տես՝ **Ա. Աւետիսեան,** *Զաքարիա երէց Աւանցու ձեռագրական ժառանգութիւնը,*- «Էջմիածին», Զ, 1998, էջ 97-98:

5 Նոյն տեղում, էջ 95:

6 **Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեան,** *Զաքարիա նկարչի ձեռագիրը և Դաւիթ Բեկի մասին յիշատակարան,*- Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գ. Ա-Բ, 1921-1922, էջ 132:

Աւանցու ոճը յարում է արեւելեան գունաւորութեանը եւ ազատ է Կիլիկիայի եւ առհասարակ արեւմտեան ազդեցութիւնից[7]:

Խորանները բաւական ճոխ են: Սիւների խոյակները պատկերուած են մարդու, ցլի, առիւծի եւ արծուի կերպարներով, այսինքն՝ չորս Աւետարանիչների խորհրդանշաններով: Խորանների մէջի հիմնական զարդերը բուսական են, բացառութեամբ վերջինի, որտեղ պատկերուած են ձկներ: Խորանների վրայ տարբեր թռչուններ են պատկերուած, որոնցից յստակօրէն զանազանւում են ձկնկուլները, կաքաւներն ու աքաղաղները: Մի զոյգ խորանի կողքերին պատկերուած է մոմը թաթերի մէջ պահած, մարդագլուխ առասպելական էակ, մնացած խորանների կողքերը պատկերուած են ծառեր, որոնց մէջ յստակօրէն զանազանւում է նռենին եւ խնձորենին:

Մանրանկարները, բացառութեամբ Աւետարանիչների նկարների, դրուած են տեքստից առաջ եւ դրանք են. Արարչագործութեան եօթ օրեր, Զորսկերպեան աթոռ՝ ըստ Եզեկիել մարգարէի տեսիլքի, Եւայի ստեղծում, Մեղսագործութիւն, Աւետում, Սուրբ Ծնունդ, Ընծայումն տաճարում, Մկրտութիւն, Մուտք Երուսաղէմ, Ղազարոսի յարութիւնը, Ոտնլուայ, Խաչելութիւն, Յարութիւն, Թաղումն Քրիստոսի, Դժոխքի աւերումը, Համբարձում, Հոգեգալուստ, Երկրորդ գալուստ եւ ստացողի նկարը, Ահեղ դատաստան: Ընդհանուր 25 նկար, որից 10 Հին կտակարանից, 15՝ Նոր:

Բացի նշուած մանրանկարներից առկայ են նաեւ տաս խորանները, չորս Աւետարանիչների պատկերներն ու տիտղոսաթերթերը՝ իւրաքանչիւրը համապատասխան Աւետարանի սկզբում, Քրիստոսի տոհմաբանութիւնը: Որոշ կերպարներ՝ Յովհաննէս Մկրտիչ, Ղազարոս, Յուդա, հրեշտակ, հովիւ պատկերուած են լուսանցքներում:

Մենք սոյն յօդուածում կը քննենք միայն այն նկարները, որոնց պատկերագրական մանրամասները որոշակիօրէն տարբերւում են յաճախ հանդիպող պատկերներից: Բոլոր պատկերներն ունեն մակագրութիւններ, որոնք յաճախ բառացիօրէն չեն համապատասխանում Աստուածաշնչի համապատասխան հատուածներին: Որոշ պատկերներ եւ մակագրութիւններ պարունակում են աստուածաբանական-մեկնողական եւ ժողովրդական մեկնաբանութիւններ եւ ընկալումներ:

Հետաքրքրական է, որ Հին Կտակարանի 10 պատկերներից 8-ում պատկերուած է Հայր Աստուած, որի լուսապսակը բնորոշ է Քրիստոսին՝ խաչ պարունակող լուսապսակ՝ մատնացոյց անելով Հայր Աստծոյ եւ Որդի Աստծոյ էութենակից լինելու հանգամանքը:

Արարչագործութեան եօթ օրերի պատկերներից յատկապէս ուշագրաւ է հինգերորդ օրուայ մանրանկարը: Ըստ Աստուածաշնչի՝ այդ օրն Աստուած ստեղծեց բոլոր զեռուններին, մեծամեծ կէտերին, սողուններին եւ թռչուններին (Ծնդ. Ա3, 20-21): Ծաղկող Զաքարիա Աւանցու այդ օրուան վերաբերող մանրանկարը երկմասանի է. վերեւում պատկերուած է Աստուած՝ արարման պահին, ներքեւի հատուածի աջ մասում՝ թռչուններն են, մէջտեղի մասում՝ մեծ թռչուն, իսկ ահա ձախ մասում՝ մի հսկայական ձուկ: Նկարի տակ նշուած է Ծննդոց գրքի համապատասխան հատուածը՝ արարման հինգերորդ օրը, սակայն կէտերի փոխարէն գրուած է Ընդհանուր 25 նկար, որից 10 Հին կտակարանից, 15՝ Նոր:

Լեւիաթան, իսկ մեծ թռչունի (որը չկայ Ծննդոց գրքի համարժէք հատուածում) համար՝ արմաւ, այսինքն փիւնիկ: Ըստ Ա. Աւետիսեանի, այս մանրանկարով

7 Նոյն տեղում, էջ 127:

Զաքարիա Աւանցին ցանկացել է ապահովել արարչագործութեան եւ փրկագործութեան միջեւ ներ-քին կապը, քանի որ լեւիաթանը սատանան է, իսկ արմաւը՝ Քրիստոս[8]:

Արարչագործութիւնից յետոյ պատկերուած է Եզեկիելի տեսիլքը, որը շատ կարեւոր է Զորսկերպեան աթոռի խորհուրդի պատկերագրութեան համար (ինչպէս Զաքարիան է մակագրել նկարի տակ. «... զխորհուրդ չորեքկերպան աթոռոյն»): Ըստ Գարեգին կաթողիկոս Յովսեփեանի՝ Զորսկերպեան աթոռի հայկական պատկերագրութիւնում հիմնականում օգտագործւում է Աւետարանիչների կենդանի-խորհրդանշանների դասաւորութիւնն ըստ Եզեկիելի տեսիլքի (Եզեկ. Ա.Յ., 10, աջ կողմում մարդ, առիւծ, ձախ կողմում՝ եզ, արծիւ), շատ աւելի հազուադէպ՝ համաձայն Յովհաննու Յայտնութեան (Յայտն. Դ., 7-8, առիւծ, եզ, արծիւ, մարդ)[9]:

Հին Կտակարանից վերջին երկու պատկերը վերաբերում են Ադամի կողից Եւայի ստեղծմանը՝ դրախտում, որտեղից դուրս են հոսում չորս գետերը եւ նրանց գայթակղուելը օձից: Եթէ Ծննդոց գրքի համապատասխան հատուածում (Ծննդ. Բ., 10-15), գայթակղուելուց յետոյ Ադամն ու Եւան ամօթից ծածկուեցին թզենու տերեւներով, ապա նկարիչը Ադամին պատկերել է զգեստներով, իսկ Եւային՝ մերկ: Գուցէ այդպէս ծաղկողը ցանկացել է շեշտել, որ Եւան աւելի մեղաւոր է, քան Ադամը: Օձը պատկերուած է հսկայական հանգուցաւոր վիշապի տեսքով եւ թեւաւոր է[10], *որը շշնջում է Եւայի ականջին՝ գայթակղելով նրան ուտել պտուղը:*

Նոր Կտակարանից ամենառաջին պատկերն Աւետումն է, որը յաջորդում է Եւայի գայթակղման պատկերին: Այս երկու պատկերները՝ Ադամի եւ Եւայի մեղսագործութիւնը եւ Ս. Աստուածածնին աւետելը խորհրդաբանօրէն սերտօրէն կապուած են միմեանց: Եթէ Եւան առաջին կինն էր, որի պատճառով մարդիկ մեղսագործ դարձան, ապա Ս. Աստուածածինը եղաւ այն սափորը, որի միջոցով մարդեղացաւ Քրիստոս եւ խաչուելով՝ փրկեց մարդկանց մեղքերից[11]:

---

8 **A. Avetisyan,** *The Medieval Symbols of Leviathan the Fish and Phoenix the Bird*, Armenian Art, Yerevan, 2005, 3, p. 34-35.

9 **Գ. Յովսեփեան,** *Ոսկերչական արուեստի մի նմուշ ԺԳ. դարում*,- «Գեղարուեստ», 4, Թիֆլիս, 1911, էջ 41:

10 Ըստ ժողովրդական աւանդութեան՝ օձը զրկուեց իր թեւերից եւ ոտքերից այն պատճառով, որ իր մարմինը տուել էր սատանային եւ ընդմիշտ սողուն դարձաւ (**Ա. եպս. Ժամկոչեան,** *Աստուածաշունչը եւ հայ բանաւոր աւանդոյթը*, Երեւան, 2012, էջ 132):

11 «... Ասացեալ աւանդութեամբ ի սուրբ հարցն, յաւուր չորեքշաբթի ազդեցութեամբն սատանայի խաւսեցաւ աւձն ընդ Եւայ, որոյ զբանն խմոր չարութեան և զբոլոր զբնութիւնս մեր ապականեաց: Վասն որոյ պարտ էր առաջին չարութեան ընդդէմ երևէր և գերագոյն բարութեան, և ի ձեռն երկրորդ կնոջն վերըստին նորոգել զբնութիւնս մեր: Վասն այսորիկ յայս չորրորդ աւուրս առաքեցաւ Գաբրիէլ առ սուրբ կոյս Մարիամ և Աւետարանեաց զմարմնանալ Միածնին հաւր առ ի նմանէ: Արդ յիրաւի ի չորրորդ աւուր եղեալ է յիշատակ Աւետեաց Աստուածածնին: Զի որպէս ի ձեռն առաջին կնոջն կուսին ի բարեաց ի չարիս անկան մարդիկ և ի կենաց ի մահ պատրաւք աւձին, այսպէս և ի ձեռն երկրորդ կուսին տիրուհւոյ ի չարեաց ի կատարեալ բարիս և ի մահուանէ ի կեանս փոխեցան մարդեղութեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ... և յայսմ աւուր չորրորդի, որ եղեալ է զԱւետիսն Գաբրիէլի առ կոյսն լինել այս ըստ խորհրդոյ հանդիպի և ոչ ըստ ժամանակին, քանզի ժամանակն յեթն Ապրիելի է: Որպէս ասացաք այլ ի յաւանդութենէ սուրբ հարցն, այսպէս ընկալաք, թէ յաւուր չորեքշաբաթոջ աւձն արբանեակ եկաց սատանայի և խաւսեցաւ ընդ Եւայի և նա ընկալաւ զբանս նորա յղացաւ ի սրտին զբանս խորհրդոյ չարին և ծնաւ մեղաւք զմահ ամենայն աշխարհի: Վասն ասորիկ ի նոյն պատկեր աւուր, որ է չորեքշաբաթի և եւթներորդ Ապրիելի, առաքեցաւ Գաբրիել յԱստուծոյ առ կոյսն Մարիամ և աւետեաց՝ ուրախ լեր բերկրեալ տէր ընդ [քեզ], և ընկալեալ Մարիամու ընդունկն իւր զմուտ բանին Աստուծոյ յղացաւ ողջութիւն ամենեցուն գեղեցիկ խորհրդով, և ծնաւ զարդարութիւն և զկեանս ամենայն տիեզերաց»:

Աւետման մանրանկարում հետաքրքիր է նաեւ Գաբրիէլ հրեշտակապետի բռնած գաւազանը (ի տարբերութիւն տէգի, որը պատկերուում է մանրանկարների մեծ մասում), որը վերջանում է շրջանով՝ կարծես վառուող մոմ լինի կամ շրջանում պատկերուած աչք:

Մկրտութեան տեսարանում Քրիստոս պատկերուած է Յորդանան գետում բազմոտանի եւ բազմաթեւ «անդնդային վիշապի գլխին կանգնած: Վիշապի վերեւում, նկարի աջ մասում՝ շրջանակից դուրս պատկերուած է չալմայով եւ սափորով մարդանման մի էակ, որի կողքին մակագրուած է՝ դեւ: Մկրտութեան տեսարանների որոշ մանրանկարներում այս էակը սովորաբար պատկերուած է լինում Յորդանանի մէջ եւ համարւում է գետի ոգին: Փաստօրէն Զաքարիան օգտագործել է Մկրտութեան դրուագի երկու ընդունուած պատկերագրութիւնները՝ միացնելով վիշապին եւ գետի ոգուն մի տեսարանում:

Աւետարանի 17-րդ պատկերը Ոտնլուան է: Սա միակ էջն է, որտեղ նկարը զոյգ չի կազմում նախորդի հետ՝ կողքի էջը դատարկ է: Հաւանաբար պէտք է լինէր Խորհրդաւոր ընթրիքը, որը ծաղկողն ինչ-ինչ պատճառներով չի նկարել[12]:

Խաչելութեան տեսարանում՝ խաչի վերնամասում պատկերուած է կուրծքը ծուատող եւ իր արեամբ ճագերին կերակրող հաւալուսնը: Հաւալուսնը խորհրդանշում է Քրիստոսին (ինչպէս մակագրել է Զաքարիան՝ «յաւրինակ Քրիստոսի»)՝ ինչպէս հաւալուսնը կամաւոր կերպով իր արեամբ փրկում է սոված ճագերին, այնպէս էլ Քրիստոս ինքնազոհաբերաբար իր արեամբ փրկեց մեղսագործ մարդկութեանը[13]:

Աւետարանում առկայ Աւետարանիչների պատկերները զետեղուած են համապատասխան Աւետարանների սկզբում: Բացի Յովհան Աւետարանչից, ով պատկերուած է իր աշակերտ Պրոխորոնի հետ, մնացած երեք Աւետարանիչների դէպքում իւրաքանչիւրի դիմաց պատկերուած է մեծ ձուկ՝ որպէս Քրիստոսի խորհրդանշան, քանի որ բացի Քրիստոս Աստուած վկայող Յովհաննու Աւետարանից, միւս Աւետարանները պատմում են Քրիստոսի երկրային կեանքի մասին:

Ձեռագիրը հարուստ է յիշատակարաններով: Աւետարանում առկայ են եւ՛ ստացողի, եւ՛ ծաղկողի, եւ՛ գրչի յիշատակարանները (առաւել մանրամասն տե՛ս Աւետարանի նկարագրութիւնը): Ինչպէս արդէն ասուեց, Աւետարանի ծաղկողը նշանաւոր մանրանկարիչ Զաքարիա Աւանցին էր, իսկ Աւետարանի գրիչը կամ արտագրողը՝ Կարապետ աբեղան[14]:

Յիշատակարանից պարզ է դառնում, որ Աւետարանն արտագրուած է Վարագայ վանքի վիճակին պատկանող Աւանց գիւղաքաղաքում, 1599 թուականին (առաւել մանրամասն տե՛ս Աւետարանի նկարագ-

---

Ձեռ. թիւ 2040, էջ 88 ա-բ, մէջբերումն ըստ՝ **Ռ. Հ. Վարդանեան**, *Հայոց տօնացոյցը (4 - 18 դարեր)*, Երեւան, 1999, էջ 529-530:

12 Աւետարանի այդ հատուածում կտրած հանածի հետք չկայ, ուստի կարող ենք վստահաբար ասել, որ Աւետարանի գոնէ այդ հատուածում որեւէ էջ յետագայում չի կորսուել, եւ մանրանկարիչն ուղղակի չի շարունակել ծաղկել Աւետարանը:

13 **Ա. Մնացականեան**, *Հայկական զարդարուեստ*, Երեւան, 1955, էջ 285-286: **Հ. Պետրոսեան**, *Խաչքար. ծագումը, գործառոյթը, պատկերագրութիւնը, իմաստաբանութիւնը*, Երեւան, 2008, էջ 354-355 (Իր կուրծքը ծուատող թռչնի պատկերը յայտնի է դեռեւս վաղմիջնադարից եւ արտայայտուած է Մուղնիի քառակողմ կոթողի վրայ, էջ 41): **Լ. Սիմոնեան**, *Հաւքն իր թեւով, օձն իր պորտով*, Երեւան, 2011, էջ 25:

14 Կարապետ անունով անձ յիշատակւում է նաեւ Զաքարիա Աւանցու կողմից նկարազարդուած հմր. 5507 (231բ) ձեռագիր Աւետարանում, սակայն վերոնշեալ մարդն ամուսնացեալ աշխարհիկ էր, ուստի նոյնականացնել այս երկու անձանց տեղին չէ:

բութիւնը)՝ վանքի վանահայրեր Ստեփանոս Բաղիշեցու եւ Կարապետ վարդապետի հովուութեամբ եւ Դաւիթ Դ. Վաղարշապատցի կաթողիկոսի հայրապետութեան շրջանում: Հետաքրքրական է, որ յիշատակարանում չի յիշատակուում Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Գ. Փոքր կաթողիկոսը[15]*:*

Այսպիսով շրջանառութեան մէջ է դրուում Վարագայ վանքի գրչութեան կենտրոնի նմուշ հանդիսացող մի Աւետարանի նկարագրութիւն՝ առատ մանրանկարներով, որի ծաղկողն էր նշանաւոր Զաքարիա Աւանցին:

ԿԱՐՄԻՐ ԱԻԵՏԱՐԱՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ[16]

Աւանց գիւղաքաղաք, Վարագայ վանք, ՌԽԸ.-1559: ԳՐԻՉ՝ Կարապետ: ԾԱՂԿՈՂ՝ Զաքարիա Աւանցի: ՍՏԱՑՈՂ՝ դարբին Խլղաթ:

ԹԵՐԹ՝ *37+249=286. չգրուած՝ 1ա-գ, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա, 13ա եւ այլն: ՊՐԱԿ՝ 12xԱ-ԻԱ (Ա, Ե, ԻԱ՝ 11): ՆԻՒԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24,5x17,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (17,5x5,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 30ա). միաւորների սկզբնատողերը, պարբերութիւնների սկզբնատառերը՝ կարմիր թանաքով: ՏՈՂ՝ 22-23: ԿԱԶՄ՝ մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշի, Ա. փողկին մետաղէ շղթայի վրայ ամրացուած խաչ՝ «Աստուածամայրը մանուկ Յիսուսը գրկին» շրջապատուած 4 Աւետարանիչներով, եւ մետաղէ շղթայի վրայ ամրացուած մեդալիոն «Խաչելութիւնը» պատկերով: Միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ (Ա փեղկի հատուածից թուղթը բացակայում է):*

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ՝ *Յայսմաւուրք՝ ցանկ (հերթականութիւնը խառնուած, աջ հատուածից կտրուած՝ գրաղաշտի վնասումով), ԺԶ-ԺԷ. դդ., թերթ՝ 2 (պհպ Ա) (եւս 2 թերթ կտրած՝ պահպանուած միայ 1 սմ լայնութեան հիմքը): Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 24,5x17,7, երկսիւն (20,5x6,5), տող՝ 26:*

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ. *Արարչագործութեան է. աւուրք՝ 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, Տեսիլ Եզեկիէլի՝ 10ա, Արարումն Եւայի՝ 11բ, Մեղսագործութիւն՝ 12ա, Աւետում՝ 13բ, Ծնունդ՝ 14ա, Ընծայումն՝ 15բ, Մկրտութիւն 16ա, Մուտքն յԵրուսաղէմ՝ 17բ, Յարութիւն Ղազարու՝ 18ա, Ոտնլուայ՝ 19ա, Խաչելութիւն՝ 19բ, Յարութիւն՝ 20ա, Թաղումն Քրիստոսի՝ 21ա, Աւերումն դժոխոց՝ 21բ, Համբարձումն՝ 21բ, Հոգեգալուստ՝ 22ա, Երկրորդ գալուստն՝ 23բ, Զորեքկերպեան Աթոռ՝ 24ա, Մատթէոս՝ 38բ, Տոհմաբանութիւն Քրիստոսի՝ 39բ-41ա. Մարկոս՝ 102բ, Ղուկաս՝ 155բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 222բ: Խորան՝ 27բ, 28ա, 29բ, 30ա, 31բ, 32ա, 33բ, 34ա, 35բ, 36ա: Կիսախորան՝ 39ա, 103ա, 156ա, 223ա: Լուսանցային՝ Յովհաննէս Մկրտիչ՝ 43բ, Հրեշտակ՝ 151բ, Հովիւ՝ 152բ, Ղազարոս՝ 239ա, Յուդա՝ 251բ: Լուսանցազարդ՝ բուսական, կենդանական, թռչուն յուշկապարիկ, տաճար, Քրիստոսի հրաշագործութիւնների, անձանց և սրբերի նկարներ՝ 43ա, 81ա, 60ա, 101բ, 119ա, 129ա, 131բ, 145բ, 151բ, 196ա, 208ա, 234բ, 257ա: Զարդագիր՝ հանգուցագիր, մարդագիր, կենդանագիր, թռչնագիր: Գոյներ՝ ոսկի, կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, սպիտակ, սեւ, մանուշակագոյն, շագանակագոյն,*

---

15 Աղթամարի կաթողիկոսութեան վիճակի մէջ ներառնուած վանքերում արտագրուած ձեռագրերի յիշատակարաններում, սովորաբար, յիշատակւում է եւ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, եւ՝ Աղթամարի կաթողիկոսը:

վարդագոյն: Գունեղանգներից գերիշխում է կարմիրը[17]:

ՎԻՃԱԿ՝ բաւարար, կազմի կաշուի եւ տախտակի եզրերը մաշուած-թափուած, խոնաւութիւնից որոշ թերթեր գունափոխ ու դեղին հետքերով, պատառիկ պահպանակը գունափոխուած, գիրը՝ տեղ-տեղ թափուած, տեղ-տեղ ցեցակեր, հին շրջանի նորոգման հետքերով, խոնաւութեան հետեւանքով՝ նախորդ էջի մանրանկարի ներկը ողջ ձեռագրում համատարած արտատպուած հանդիպակաց էջին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 26բ-27ա Թուղթ Եւսեբեայ:

2. 27բ-28ա, 29բ-30ա, 31բ-32ա, 33բ-34ա, 35բ-36ա Համաբարբառ՝ կանոնք Ա-Ժ.:

3. 37ա Նախադրութիւն, 37բ-38ա Գլուխք, 39ա-99բ Աւետարան ըստ Մատթէոսի:

4. 99բ-100ա Նախադրութիւն, 101բ-102ա Գլուխք, 103ա-154ա Աւետարան ըստ Մարկոսի:

5. 154ա Նախադրութիւն, 154բ -155ա Գլուխք, 156ա-221բ Աւետարան ըստ Ղուկասու:

6. 221բ Նախադրութիւն, 222ա Գլուխք, 223ա-270ա Աւետարան ըստ Յովհաննու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

23բ (յիշատակարան ստացողի) Զստացող սուրբ Աւետարանիս զդարբին Խլղաթն բարեխաւս ունի առ Աստուած զսուրբ Աւետարանս:

36բ (յիշատակարան ծաղկողի) Զ Պաւղոս[18] քաչէ և արի բաբունապետն եղև պատճառ մեկնելոյն համաբարբառուցս: Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք նորա և Աստուած ձեզ ողորմեսցի ամէն:

38բ (յիշատակարան ծաղկողի) Զաքարիա սակաւ գծողս, զկազմողս եւ զնկարողս յիշեա և Աստուած զքեզ յիշէ: Աւարտեցաւ ի Ռ. և ի ԽԸ. (1599) թվին (Ծածկագիր)[19]:

155ա (յիշատակարան ստացողի) Զստացող սուրբ Աւետարանին զդարբին Խլղաթն և ծնօղքն իւր յիշեցէք և Աստուած զձեզ յիշէ:

221ա (յիշատակարան գրչի) Զմեղուցեալ և զանյիշելի գրիչս զԿարապետ յիշեսջիք ի Քրիստոս և դուք յիշեալ լիջիք: (3 տող ներքև, նոյն գրչի կողմից աւելացուած) Բիւրապատիկ մեղայ Տեառն: Միթէ ինքն ողորմած լինի:

222ա (յիշատակարան ստացողի) Զստացող սուրբ Գրոցս զուսթա Խլղաթն և ծնաւղքն իւր զԱւետիսն և զՓաշէն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք նոցա ամէն: Աւարտեցաւ ի ՌԽԸ. (1599) թվին:

270ա (յիշատակարան գրչի) Փառք անզկիզբն Բանին և զկիզբն ամենայնի և գոյացուցիչն բնաւից նորա գիծ էին զնորս չեն հետազաւտելի և ոչ զինչէն և զինչ պիտին համարձակելոյն յամենայն մտաց սլացման գոյութիւն անզնելի Գոյին, որ է բան և կնիք, և սահմանէին փառաւորութիւն անպար իմանալի սեռին, որ է հոգի համագոյ էին և փառակից Բանին, որ տրամադրեաց զմատունս վերջացեալ

17 Հմմտ. Զաքարիան պատկերազարդման մէջ առաւել շատ օգտագործում է կարմիր գոյնն իր երանգներով, ապա կանաչը, իսկ սպիտակն ու դեղինը աւելի քիչ, ոսկին օգտագործում է միայն լուսապսակների համար: Տես՝ **Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեան,** Ն2. աշխ., էջ 132, 127-137 էջ:

18 Պողոս վարդապետ – Վարագայ վանքի վանահայր 1660 թ.-ից:

19 Նշանաւոր է իր գործածած բազմատեսակ ծածկագրերով - **Նորայր արք. Մովսեան** (Պողարեան), *Հայ ընկարողներ (ԺԱ.-ԺԷ. դար)*, Երուսաղէմ, տպ. սրբոց Յակոբեանց, 1989, էջ 172:

տկար ոգւոյ Կարապետի և անուամբ միայն աբեղայի գրել և կարգել զճառ երախտեաց աստուածագործ սքանչելեաց, զոր ճշմարիտ և Աստուածն Բան՝ միածին որդին Աստծոյ Յիսուս Քրիստոս ի վախճան աւուրցս այսոցիկ կատարեաց զնշանս և զարուեստս: Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թե չորից աւետարանչացն են չորք անկիւնք արարածոց արևելք, արևմուտք, հիւսիս, հարաւ: Պարտ էր համասփիւռ քարոզել Աւե(270բ)տարանն: Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոյս գետոցն յադենական աղբերէն յառաջ խաղացեալ առ տիեզերաց առոգումն՝ Փիսովն, Գեհովն, Տիգրիս, Եփրատէս: Եւ սոցայ գոլով նմանապէս թվով ուրճացեալք ի կենդանական աղբերէն առոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեանս: Նոյն աւրինակ ըստ տեսութեան Եզեկիելի քառակերպեանն աթոռոյ՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ: Զանմարմնոց Տէրն, տեսնելով բազմեալ ի յաթոռ փառաց իմանալի ցուցմամբ զխնամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածապէս և տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ ի հողածինս հրեղինացն անմահից զմահկանացուս առնել հաղորդս և սև գերակատար հանել ի փառս: Վասն զի փառաց թագաւորն Քրիստոս փառակիցն Հաւր և Հոգոյ Սրբոյ զմերս առնելով բնութիւն աստուածութիւն ուսուցանելով մի Որդի դաւանել, որ յԱստծոյ Հաւրէ և որ ի Մարի(271ա)ամայ Սուրբ կուսէ անճառ միութեամբ, զոր աւետարանականն ուսուցանեն բանք մինչ ի կատարած հաւանութեամբ հաւատ հաստատ կարգաւք ի նոյն յարելով յառաքելաւանդ քարոզութիւն, որ զաստուածախաւս վարդապետութիւն դրոշմեալ զսակաւս ի բազմաց առ ի հաւատալ, թէ Յիսուս Քրիստոս է որդի Աստծոյ, ըստ վեհին Յովհաննու հաւատալ և զկեանսն յաւիտենականս ընդունել յանուն նորա:

Եւ արդ ես՝ յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկանց եկեղեցոյ, ծառս տերևալից ի բացուստ և մաւտոյ դատարկ յամենայն առաքինութեանց նմանս փչաբեր երկրի և պտղակորոյս ձիթենիս, որ անուամբս Կարապետ կոչիմ, և գործովս ունայն յամենայն բարութեանց զոր վայելեն մանկունք եկեղեցւոյ: Եւ արդ իմ ոչ բերելով զայսպիսի վստահութիւն համարձակիլ ի սուրբ Աւետարանս, որ առաքինացն է համարձակութիւն, այլ վասն պատուիրելոյ առաքելոյն, թէ յոր կոչեցար ի նմին կացջիր: (271բ)

Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ՌԽԸ. (1599) թվին ի յերկիրս Վանա, ի գեաւղաքաղաքս, որ կոչի Աւանց, ընդ հովանեաւ սուրբ Յովհաննէս Մկրտչին և սուրբ Գրիգոր Լուսաւորչին ի հայրապետութեան էջմիածնի Դաւիթ կաթողիկոսի[20] և մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարագա Ստեփաննոս[21] արհիեպիսկոպոսի և Կարապետ[22] վարդապետի ի խնդրոյ աստուածասէր և բարեմիտ տանուտրոջ դարբին Խլղաթին և ծնողաց նորին դարբին Աւետիսին, զՓաշին, կողակցին Բէկիխաթունին, որդոցն Աւետիսին, Նուրդնին, Յովանիսին, դստերացն Գուլիզադին, Խաթունաղին, եղբաւրն Ի.շ///ին, կողակցին //անսէֆին, որդոցն Ջանիբեկին, Յոհանիսին, մեծ պապին Պարսամին, կողակցին Խալխաթունին, հաւրքւերն Բուլըստանին, հաւրեղբարցն Յոհանիսին, Իսիբեկին և ամենայն արեան մերձաւորացն ամէն: Դարձեալ յիշեցէք զառաջ յիշեցեալսն ի Քրիստոս զուսթայ Խլղաթն և զծնաւղքն իւր՝ զԱւետիսնն և զՓաշէն և զկողակիցն զԲէկին և որդոցն Աւէտիսին, Նուրդին, Յովանիսին, դստերացն Գուլզադին, Խա-

20 Դաւիթ Դ. Վաղարշապատցի - կառավարում 1590-1629 թթ.:

21 Ստեփանոս Բաղիշեցի – Վարագայ վանքի վանահայր 1597 թ.-ից:

22 Կարապետ վարդապետ – Վարագայ վանքի վանահայր 1579 թ.-ից:

թունաղին, եղբաւրն Իսիբէկին, կողակցին Նսէքին, որդոցն Ջանիբեկին, Յոհանիսին, դստերացն Գաւզալին, եղբարցն Հանգուցելոցն Նաւրդինին, Ջանիբեկին, մեծ պապին Պարսամին, կողակցին Խալթաթունին, հաւրքաւերն Գուլբստանին, հաւրեղբարցն Իսիբէկին և ամենայն արեան մերձաւորացն մեծի և փոքու առհասարակ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք նոցա և Աստուած ձեզ ողորմեսցի ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

272ա (17-րդ դար, նոտրգիր) Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զդարբին Խլխաթն և զկողակիցն իւր զՄահմուռն և զորդին և զորդին իւր զՂազարն և զդուստրն զՄարիամ, որ մականուն Թորվանդայ կոչի, զՀռոմսիմէն, զփոքրիկն որդին՝ զԱնդրիաս, Խանէսն, զԱւետիսն և իւր կողակիցն Եթարն և զորդին իւր զՄուրադն, զՄէլքէսէթն և դուստրն իւր Բէկին, զՅովանէսն և իւր կողակիցն զԷթարն, Սահակն և իւր կողակիցն զՆորիխան և մերձաւորացն մեծի և փոքու առհասարակ յիշեցէք նա և Աստուած ողորմի ասացէք նոցա և Աստուած մեզ ողորմեսցի ամէն: Հայր մեր, որ յերկինս:

ՆՇՈՒՄՆԵՐ՝ 271բ (//աթ/ոս՝ ջնջուած)

ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՐԱՆՆԵՐԻ՝[23] *27բ:*

Առաջին խորանն համակ ծիրանի և բոլորակքն, երկրորդ սիւնքն և խորանքս՝ կանաչ զհրեշտակաց զանվաղջան կեանքն ցուցանէ և սիրայմարքի, որոյնքն զանապական բնութիւն ցուցանէ և ոտքն սեաւ՝ զանկումն սաղայելացն, զի կրկին տրտմութիւն ունին մարդկան մեղաւորաց և անկելոց դասուց, իսկ ծնաւտքն սիրամարգացն՝ ի սեղանն ցուցանէ:

28ա Իսկ երկրորդ սեղանքս՝ ոսկի փետուր սիրամարգացն՝ զմաքուր բնութիւնս հրեշտակացն ցուցանէ, իսկ ծնաւտքն, որ զսեղանն ցուցանէ և զճաշակ իմաստից նոցայ ի սեղանոյն Աստծոյ: Արմաւենիքն, զի բարձրացեալ են գիտութեամբ և փառաւք և, որ վայրին կրկնեալ, զի զվերջինսն լուսաւորին ի գլուխ սեանց զխորհուրդ չորէք կերպսն աթոռոցն:

29բ է (7) և ութն խորանն Մովսէսի՝ կարմիր, նուազ սեաւն և կապուտն՝ առաւել ի սմայ հաւք, ձկնորսք, որ են առաքեալքն և մրտմունքն Աւետարանիչքն, որ մէջ յաշակերտացն յետս դարձան, և ծաղիկն շուշան, որ է Դ. (4), գոյն սպիտակ, դեղին և կարմիրութեան վաստակոցն:

30ա Զի ստուերական էր աւրէնքն և արիւն անասնոց՝ սակաւ ինչ սրբութիւն մարմնոյ Աստծոյ բոխ եղին աստուածային խորանաց, և որ յետն հային այս ինքն, զի ոմանք սպիտակն զպարզութիւն մտացն նշանակէ և դեղին՝ զհամբերութիւն վարուցն, և կարմիր զարի:

31բ Ե (5) և վեց խորանն, որ է տապանն Նոյի, և խորանն Աբրահամու, կարմիրն՝ իւրոյն արեան ծածուկ էր, ի վեց խորան ի վերայ սեղանոյն յայտնեցաւ, զի Աբրահամի և զլուսաւոր առաքինութիւնս ցուցանէ, և Դ (4) կաքաւքս ի խորհուրդ պոռնիկ:

32ա Որդւոյն Աստծոյ, որ Նոյ և Աբրայհամ պատարագ մատուցին, մինչև ցայս խաչն ծառն Քրիստոսի ետես զխաչն, ի սմայ ծառք ձիթենիք՝ զերկար կեանս հայրապետացն, զխիստ վարս կանացն: Եւ ի Թամար, Ռախաբ, Հռութ և Բերսեբէ:

33բ Երրորդ խորանս՝ կանաչն զհրեշտակաց անմահ բնութիւն ցուցանէ և զանվաղջան կեանքն նոցայ, և մայմունքն, որ ընբռնեալ կան զմոմքն, նշանակեն զմարտիրոսքն, որ վասն սիրոյն Քրիստոսի այ-

23 Խորանների մեկնութեան Պօղոս վարդապետի տարբերակը տե՛ս Վ. Ղազարեան, *Խորանների մեկնութիւններ*, Երեւան, 1995, էջ 104-107:

ըեցան հրով և փառք Քրիստոսի անմահ Արքային, թէ զամէն կարգաւ գիրս, զամէն թղթերս չեն վերացել:

34ա Չորրորդ խորանս՝ նշանակէ զդրախտն Ադամայ, սեաւ գոյն՝ զմաշկ, ակն Ադամայ՝ կապուտն, թէպէտ անկաք ի փառացն, սակայն նշուլ աստուածային ընդ մեզ էր ,և ի գլուխ սեանցն չորէքկերպան աթոռոց կենդանիքն ունին զԱւետարան:

35բ Ինն խորան՝ տաճարն Սողովմոնի՝ նուզեալ սեաւ գոյն, կապուտն և կարմիր առաւել, զի մերձ է Գալուստն Քրիստոսի: Ի սմայ հաւք, որք զպարանս ի միմեանս ողորեալ, Հին և զՆոր Կտակարացն բերէ զմիայբանութիւն, բերանքն և ոտքն կարմիր՝ զմարդեղութիւն Քրիստոսի պատմեն:

36ա Տասն խորանն՝ եկեղեցի Սուրբ ամենևիմբ զարդարեալ, կարմիր և կանաչն ի վերայ սեղանոյն ի սմայ հաւք աքաղաղք, որ նշանակեն զմարգարէիցն, որք կանուխ խաւսեցան զծագումն առաւտեան լուսոյ, և ծառք նռնենիք՝ բանք մարգարէից, որ բառիւ ծածկեալ էր բանք նոցա:

SUMMARY

Wanderings of a Newly Found Gospel Copied at Varag Convent

Karen Hovhannisyan, Hayk Hakobyan

In several villages and cities of the Republic of Armenia You can find socalled «House sacred manuscripts». They belong to private persons. The notion of «House sacred manuscript» is mentioned since the 19th c. and means a manuscript as a sacred book and an object of veneration. An example of such a practice is the Gospel discussed here. Almost all the House sacred manuscripts have their sanctuaries.

The sanctuary of the discussed manuscript is a lodge, a simple rectangular building, covered with a flat roof, and people call it a chapel. According to the hosts of the Gospel, the manuscript has been brought from an unknown location between Van and Mush.

The manuscript is rich with colophons. There are colophons of the owner, the illustrator, the copier. The illustrator is the famous miniaturist Zakaria of Avants, and the copier is Karapet vardapet .

We learn from the colophon that the Gospel has been copied in the location Avants that belonged to the parish of Varag convent, in 1899, when the superiors of the convent were Stephanos of Baghesh and Karapet vardapet, and the catholicos was Davit the 4th of Vagharshapat.